

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՒ ՑՈՒՑԱՆԱԿԻ ԲԱՑՈՒՄ

Դեկտեմբերի 10-ին՝ ժամը 14:00 ին, Հայաստանի ազգային գրադարանի մեծ ցուցասրահում տեղի ունեցավ հանդիպում, գրող, հրապարակախոս Խաչատուր Դադայանի հետ, ինչպես նաև «Գրիգոր և Կարապետ Մելքոնյան հիմնադրամի գործունեության՝ մասնավորապես 1933-1939թթ. Հայաստանի ազգային գրադարանի թամանյանական մասնաշենքի կառուցման վերաբերյալ ցուցանակի բացումը: Ցուցասրահում ներկայացված էր Խաչատուր Դադայանի հեղինակած գրքերը և Մելքոնյան ֆոնդի միջոցով հրատարակված հայագիտական գրականություն: Ելույթներ ունեցան Ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը, հասարակական գործիչ, պատմաբան, թարգմանիչ Սարգիս Հացպանեանը, Ազգային արխիվի տնօրեն, Ամատունի Վիրաբյանը: Ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը Խաչատուր Դադայանին պարգևատրեց “Հակոբ Մեղապարտ” հուշամեդալով հայ մշակույթին մատուցած ծառայությունների և գրական, հասարակական կյանքում ունեցած ավանդի համար: